ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 638-Ա/2 «20» մայիսի, 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 870-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիտորինգի կարգը հաստատելու մասին» N 717-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական

գործունեության ծրագրերի և թեմաների մոնիթորինգի կարգը հաստատելու մասին» N 870-Ա/Ք հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«20» մայիսի, 2020 թ.
N 638-Ա/2 հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պետական-նպատակային ծրագրերի և պայմանագրային (թեմատիկ) թեմաների (այսուհետ՝ Ծրագիր/Թեմա)՝ գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության գնահատման նպատակով իրականացվող մշտադիտարկման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի/Թեմայի մշտադիտարկման նպատակն է՝ դրա կատարման ընթացքի, ձեռքբերված արդյունքների, ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններով ներկայացված տվյալների համապատասխանության ստուգումը ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված առաջադրանքին, օրացուցային պլանին և ծախսերի նախահաշվին:

3. Ծրագրի/Թեմայի մշտադիտարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից:

4. Ծրագրի/Թեմայի մշտադիտարկումն իրականացվում է հետևյալ փուլերով.

1) կատարման ընթացքի, ձեռքբերված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների, ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում.

2) հավաքագրված տվյալների վերլուծություն.

3) հավաքագրված տվյալների և դրանց վերլուծության հիման վրա մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի (այսուհետ՝ Տեղեկանք) կազմում.

4) բացահայտված խնդիրների կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների և ցուցումների մշակում ու Ծրագրի/Թեմայի ղեկավարին տրամադրում.

5) մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ շտեմարանի (այսուհետ՝ Շտեմարան) վարում:

5. Յուրաքանչյուր տարի իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության 16 Ծրագրի/Թեմայի, այդ թվում՝ բազային ֆինանսավորման առնվազն 6 Ծրագիր, նպատակային-ծրագրային ֆինանսավորման առնվազն 2 պետական Ծրագիր, պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման առնվազն 8 Թեմայի մշտադիտարկում:

6. Ծրագրի/Թեմայի մշտադիտարկումը կարող է սկսվել՝

1) 12 ամիս տևողությամբ Ծրագրի/Թեմայի դեպքում՝ ոչ վաղ, քան իրականացման երեք ամիսը լրանալուց հետո.

2) 24 ամիս և ավելի տևողությամբ Ծրագրի/Թեմայի դեպքում՝ ոչ վաղ, քան իրականացման վեց ամիսը լրանալուց հետո.

3) ոչ ուշ, քան Ծրագրի/Թեմայի իրականացման ավարտից մինչև երեք ամիս առաջ:

7. Մշտադիտարկում իրականացնելուն պատակով Կոմիտեի նախագահի հրամանով ձևավորվում է աշխատանքային խումբ (այսուհետ՝ Խումբ), որի կազմում ընդգրկվում են Կոմիտեի քաղաքացիական ծառայության ղեկավար և մասնագիտական պաշտոններ զբաղեցնող երեք աշխատակիցներ և գիտության տվյալ բնագավառի գիտական պետական կազմակերպությունների երկու ներկայացուցիչներ:

8. Խումբը ձևավորվում է ոչ ուշ, քան մշտադիտարկման սկզբից յոթ օր առաջ: Մշտադիտարկման մասին Ծրագրի/Թեմայի ղեկավարը տեղեկացվում է ոչ ուշ, քան մշտադիտարկման սկզբից երեք օր առաջ:

9. Խումբն ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում Կոմիտե ներկայացված փաստաթղթերը, Ծրագրի/Թեմայի իրականացման ընթացքը: Անհրաժեշտության դեպքում Ծրագրի/Թեմայի ղեկավարից կարող են պահանջվել Պայմանագրով նախատեսված լրացուցիչ փաստաթղթեր և նյութեր, կազմակերպվել այցելություններ՝ Ծրագրի/Թեմայի իրականացման վայր հանդիսացող կազմակերպություն:

10. Խումբը հավաքագրում է մշտադիտարկման համար անհրաժեշտ տվյալները, յոթ աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է համապատասխան վերլուծություն:

11. Խմբի ղեկավարը Կոմիտեի գլխավոր քարտուղարին է ներկայացնում Տեղեկանք՝

Ծրագրի/Թեմայի կատարման ընթացքի, ձեռքբերված արդյունքների, Պայմանագրով նախատեսված առաջադրանքին, օրացուցային պլանին և ծախսերի նախահաշվին համապատասխանության մասին: Մշտադիտարկման արդյունքում խնդիրներ բացահայտվելու դեպքում դրանց կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ Խմբի առաջարկությունները նույնպես ներառվում են Տեղեկանքում:

12. Կոմիտեի գլխավոր քարտուղարը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Ծրագրի/Թեմայի մշտադիտարկման ընթացքում հավաքագրված տվյալները, դրանց վերլուծության արդյունքները և Տեղեկանքը:

13. Կոմիտեն Ծրագրի/Թեմայի ղեկավարին է տրամադրում մշտադիտարկման արդյունքում բացահայտված խնդիրների և դրանց կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունները:

14. Ծրագրի/Թեմայի ղեկավարը, տեղեկացվելուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտե է ներկայացնում բացահայտված խնդիրների վերաբերյալ հիմնավորումներ, պարզաբանումներ, ինչպես նաև տեղեկատվություն՝ խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին:

15. Մշտադիտարկման արդյունքները, Տեղեկանքը, ինչպես նաև Ծրագրի/Թեմայի ղեկավարի ներկայացրած հիմնավորումները, պարզաբանումները, խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվում է Շտեմարան:

16. Մշտադիտարկման մասին տեղեկատվությունը զետեղվում է Կոմիտեի պաշտոնական կայքում: